## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂՈՒՇՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՀՐԱՉԻԿԻ

# ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ
(ՊԱՏՄԱ-ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

Թ.00.05 «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

## ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2018

## ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГУЩЯН ГЕВОРГ ГРАЧИКОВИЧ

# ПРАЗДНИК СВ. РОЖДЕСТВА И БОГОЯВЛЕНИЯ СРЕДИ АРМЯН
(ИСТОРИКО-РЕЛИГИОВЕДЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

## АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата
исторических наук по специальности
9.00.05 «Теория и история религии (исторические науки)»

ЕРЕВАН-2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ժամկոչյան Ա.Ս.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Նահապետյան Ռ.Ա.

պատմական գիտությունների թեկնածու
Աբրահամյան Հ.Ա.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. փետրվարի 22-ին, ժամը 14.00-ին, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետում գործող ՀՀ ԲՈՀ-ի Աստվածաբանության 068 մասնագիտական խորհրդում ¥Հասցե՝ ք. Երևան, 0025, Աբովյան 52, ԵՊՀ 6-րդ «Աճեմյան գրադարանում»¤:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2018 թ. հունվարի 19-ին:
Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու
Բալյան Ա.Յ.

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.

Научный руководитель: доктор исторических наук,
профессор Жамкочян А. С.

Официальные оппоненты: доктор исторических наук,
профессор Нагапетян Р. А.

кандидат исторических наук
Абраамян А. А.

Защита диссертации состоится 22-го февраля 2018 г., в 14.00 часов на заседании специализированного совета 068 при Ереванском государственном университете (Адрес:

Ереван 0025, ул. Абовяна 52, ЕГУ, 6-ой корпус, Библиотека “Ачемян” факультета богословия).

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Автореферат разослан 19-го января 2018 г.

Ученый секретарь специализированного совета
кандидат исторических наук, доцент: алян

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Քաղաքակրթությունների պատմության մեջ քրիստոնեության մուտքով սկսվեց մի նոր ժամանակաշրջան, որն իր գաղափարական և բարոյագիտական արժեհամակարգով փոխեց աշխարհը և աշխարհընկալումը՝ իր մարդասիրական սկզբունքներով բոլոր ժամանակներում մնալով չգերազանցված: Քրիստոնեության ժամանակաշրջանը մեկնարկեց Հիսուս Քրիստոսի Ծնունդով, ինչը դարձավ Աստծու՝ մարդկանց ու աշխարհին հայտնվելու, այսինքն՝ Աստվածհայտնության վեհագույն ձևը:

Հիսուս Քրիստոսի Ծնունդը և Աստվածհայտնությունը Հայ Առաքելական Սուրբ և Ուղղափառ Եկեղեցու Տերունի տոներից է: Որպես Տաղավար տոն՝ Ս. Ծննդյանը նախորդում են պահոց շրջանը, նավակատիքը և նախատոնակը՝ տոնի նախօրյակին, հսկումը՝ նախօրյակի գիշերը, մեռելոցը՝ տոնի հաջորդ օրը: Ս. Ծնունդն ու Աստվածհայտնությունը նշվում են ութ օր: Տաղավար (և ոչ միայն տաղավար) տոները, թեև ունեն աստվածաշնչային ծագում և հենք, բայց դրա հետ մեկտեղ դարերի ընթացքում ներմշակվել են Եկեղեցում՝ ներդաշնակվելով տեղային-ազգային պայմաններին ու ոգուն: Դրանք առաջնային դեր ունեն կրոնական և ազգային ավանդույթների պահպանման և սերունդներին փոխանցելու տեսանկյունից՝ պայմանավորված էթնիկ ինքնագիտակցության բարձրացմամբ և վերահաստատմամբ: Հայաստանում, ինչպես անկախության ուղին որդեգրած ցանկացած երկրում, տնտեսական և քաղաքական կայունությունից զատ, մեծապես կարևորվում են տվյալ պետության բուն էթնոսի պատմամշակութային և հոգևոր ժառանգության, ազգային ինքնության պահպանման հիմնախնդիրները:

Տոնական համակարգը էթնոսի ինքնարտահայտման լավագույն ձևերից է: Ուստի վերջին տարիներին տեսական և կիրառական դաշտում մեծացել է հետաքրքրությունը տոների նկատմամբ: Ըստ այդմ՝ սույն աշխատանքի արդիականությունը պայմանավորված է Ս. Ծննդյան տոնի համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությամբ:

Ատենախոսության մեջ ներկայացված են

Մեսիայի գալստյան մասին մարգարեությունները՝ Հին Կտակարանում և Սուրբ Ծնունդը՝ Նոր Կտակարանում, Ս. Ծննդյանն առնչվող տարբեր ապոկրիֆներ և պարականոն գրվածքներ: Վերլուծված է Ս. Ծննդյան և Ջրօրհնեքի կանոնի հաստատումը հայոց տոնացույցում և հետագա զարգացումները: Ներկայացված են Ս.Ծննդյան տոնը և Ջրօրհնեքի կարգը հայ եկեղեցական ծիսամատյաններում՝ Տոնապատճառներում, Ճաշոցներում, Հայսմավուրքներում: Մատենագրական աղբյուրներից քաղված են Ս.Ծննդյան տոնակատարությանը կամ Ջրօրհնեքին վերաբերող հիշատակումներ: Հանգամանալից անդրադարձ է արված Սուրբ Ծննդյան ժողովրդական սովորույթներին:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:**

Աշխատանքի ***նպատակն*** է միջգիտակարգային մոտեցումների հիման վրա ներկայացնել Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության տոնը՝ ծագման և զարգացման ընթացափուլերով: Ըստ այդմ՝ դիտարկվել են հետևյալ ***խնդիրները***.

1. Քննել Ս.Ծննդյան տոնի աստվածաշնչային հիմքը,
2. Ներկայացնել Ս. Ծննդյան հիշատակումները Սրբազան ավանդության մեջ և պարականոն աղբյուրներում,
3. Ուսումնասիրել Ս.Ծննդյան և Ջրօրհնեքի տոնացուցային զարգացումները,
4. Վեր հանել և քննարկել Ս.Ծննդյան տոնը Հայսմավուրք, Տոնապատճառ և Ճաշոց ժողովածուներում,
5. Հայ մատենագրական տվյալների հիման վրա վեր հանել Ս.Ծննդյան և Ջրօրհնեքի ծիսական փոփոխությունները և հարակից այլ հարցեր,
6. Համահավաք կերպով ներկայացնել Ս. Ծննդյան ժողովրդական սովորույթները՝ ժամանակագրական փոփոխությունների կտրվածքով:

Սույն ատենախոսության անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ գործոններով. ներկայացնել աշխատանք,որը Ս.Ծննդյան և Աստվածհայտնության տոնն աստվածաբանական, կրոնագիտական, պատմագիտական, մատենագրական, ազգագրական սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների համակողմանի վերլուծությամբ ներկայացնի տոնի ծագումը, տոնացուցային զարգացումները, ծիսասովորութային համայնապատկերը՝ եկեղեցական-ծիսական և ժողովրդական դրսևորումներով:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ**: Ատենախոսական աշխատանքի քննությունը և վերլուծությունը կատարվել է ընդհանուր համեմատական, պատմահամեմատական, ֆենոմենոլոգիական, դիալեկտիկ աստվածա-բանության մեթոդներով:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ**: Ատենախոսությունում առաջադրված խնդիրները դիտարկվել են ժամանակագրական լայն կտրվածքով. Մեսիայի գալուստն ազդարարող մարգարեություններից (Ք.ա. VIII դ.) մինչև Ծնունդ (Ք.հ. I դ.): Ծննդյան ժամանակին, տոնացուցային զարգացումներին և ծիսական պատկերին առնչվող հարցերը դիտարկվել են I դ. մինչև ուշ միջնադար ընկած ժամանակափուլերում: Ս. Ծննդյան և Աստվածհայտնության տոնի ժողովրդական սովորույթները վերհանվել են XIX դ. վերջից մինչև XX դ. սահմանում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**: Ատենախոսության ***գիտական նորույթն*** ունի աղբյուրագիտական և գիտական-վերլուծական ուղղվածություն.

- Ատենախոսության մեջ առաջադրված խնդիրները լուսաբանելու համար շրջանա-ռության մեջ են դրվում ձեռագրական անտիպ նյութեր, որոնց վերլուծությունը բացահայտում է XI-XV դդ. ընթացքում Ս. Ծննդյան և Աստվածհայտնության տոնի կրած փոփոխությունները:
- Առաջին անգամ Մեսիայի Ծննդյան խորհրդաբանությունը դիտարկվում է «Մատեան ողբերգութեան» աղոթամատյանում:
- Բանահյուսությունից քաղված նյութերի հիման վրա ներկայացվում է Հիսուսի Ծննդյան պատմությանն առնչվող դրվագների մի ամբողջ շարք, որոնք «լրացնում են» Ծննդյան սուրբգրային-կանոնական պատումը՝ միա-ժամանակ ընդգծելով հայ ժողովրդի կրոնա-եկեղեցական վարքագիծն ու մտածողությունը:
- Առաջին անգամ պատմիչների և ժամանակագիրների երկերից քաղված բացառիկ տվյալների հիման վրա ուսումնասիրվում են V-XVIII դդ. Ջրօրհնյաց ծեսում կատարված փոփոխությունները:
- Մեկ ուսումնասիրության սահմանում առաջին անգամ համակողմանիորեն ներկայացվում է Ս.Ծննդյան տոնը՝ ներառելով

ա) Փրկչի Ծննդյան խորհուրդը՝ որպես

փրկագործական տնօրինության սկիզբ,
բ) տոնի հաստատման պատմությունը, կանոնային և ծիսական զարգացումները,
գ) եկեղեցական ծիսահամալիրը՝ հիմնված Ս. Գրքի, Սրբազան ավանդության, պարականոն գրվածքների, մատենագրական, կանոնագիտական, տոմարագիտական սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա,
դ) ժողովրդական ծիսահամալիրը:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**: Աշխատանքը տեսականորեն կարող է օգտակար լինել ազգային-եկեղեցական տոները ներկայացված մոտեցումներով ուսումնասիրելու գործում: Այն կարող է նպաստավոր լինել ծիսագիտության, եկեղեցու պատմության, ազգագրության, և հարակից այլ ուղղությունների ուսումնական ձեռնարկների մշակման համար:

Աշխատանքը կարող է կիրառվել ազգային և եկեղեցական տոներին, մասնավորաբար՝ Ս. Ծննդյանը նվիրված միջոցառումների, հեռուստատեսային նախագծերի մշակման համար:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Աստվածաբանության ամբիոնի կողմից: Ուսումնասիրության կարևոր դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակած գրքում և հոդվածներում:

**ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**: Առաքելական ժամանակներից մինչև մեր օրերը քրիստոնեության պատմության տարբեր փուլերում Ս. Ծննդյան խորհուրդը, պատմական հանգամանքները եղել են Եկեղեցու հայրերի, իսկ այսօր արդեն՝ ժամանակակից աստվածաբանների քննախույզ մտքի կենտրոնում:

Դեռևս II դ-ից սկսած՝ ստեղծվել է Ս. Ծննդյանը նվիրված մեկնողական, ջատագովական, իսկ ավելի ուշ՝ պատմաքննական բնույթի հարուստ գրականություն:

Բազմաբովանդակ գրականության մեջ քննարկվել են այնպիսի հարցեր, ինչպես Հիսուսի Ծննդյան տարեթիվը, օրը, ծննդյան վայրը, ծննդյան հանգամանքները և այլն: Պատմական զարգացման ողջ ընթացքում Քրիստոնեական Եկեղեցու տարբեր ուղղություններ իրենց առանձնահատկությունը պահպանելու համար

վիճահարույց հարցեր են դարձրել Ս. Ծնունդի տոնակատարության օրվա, Քրիստոսի աստվածամարդկային բնության հետ կապված խնդիրները, որոնց պատասխանները յուրաքանչյուր Եկեղեցի տվել է յուրովի՝ փորձելով հիմնավորել իր կողմնորոշումը սուրբգրային մեջբերումներով: Վերոնշյալ հարցերն արծարծվել են վաղ շրջանի Ընդհանրական եկեղեցու հայրերից Աթանաս Ալեքսանդրացու, Եվսեբիոս Կեսարացու, Կյուրեղ Երուսաղեմացու և այլոց գրվածքներում:

Աշխատանքի հիմնական առանցքը կազմում են Մաշտոցյան Մատենադարանի (38), Երուսաղեմի Ս. Հակոբյանց (4) և Վենետիկի մատենադարանների (4), Փարիզի ազգային գրադարանի (1) ձեռագրերը՝ Մաշտոց ծիսամատյաններ, Ճաշոց, Հայսմավուրք, Տոնապատճառ, Ճառընտիր ժողովածուներ, Տոնացույցեր: Դրանց շարքում են մինչ օրս հայտնի տվյալներով հնագույն համարվող երեք Մաշտոցները (ՎՆՏ, 457, X դ., ՄՄ, 1001, X-XI դդ., ԵՂՄ, 2027, 1266 թ.): Օգտագործված ձեռագրերի հիման վրա վեր է հանվել Սուրբ Ծննդյան և Ջրօրհնեքի տոնացուցային և ծիսական զարգացումների ընթացքը IX-X մինչև XVIII դդ. սահմաններում:

Վաղ միջնադարից մինչև XVIII դ. ընկած ժամանակաշրջանում Ս. Ծննդյան և Աստվածհայտնության ծեսերի, կատարման ժամկետների, դավանաբանական և հարակից այլ հարցերի վերաբերյալ արժեքավոր, երբեմն՝ նույնիսկ բացառիկ տեղեկություններ են փոխանցում հայ պատմիչները ու ժամանակագիրները: Հիշարժան տեղեկություններ կան Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Եղիշեի, Մովսես Կաղանկատվացու, Ղևոնդ Պատմիչի, Արիստակես Լաստիվերցու, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի, Մատթեոս Ուռհայեցու, Կիրակոս Գանձակեցու, Սմբատ Սպարապետի, Գրիգոր Ակներցու, Զաքարիա Քանաքեռցու, Աբրահամ Կրետացու երկերում, Կիրակոս Ռշտունցու, Տեր Բարսեղի, Անանուն Լիվոռնացու, Իսահակ վարդապետի ժամանակագրություններում:

Հայ պատմագրության մեջ պահպանված Ջրօրհնյաց հանդեսի նկարագրությունները բացառիկ են նրանով, որ դրանցում տեղ գտած մի շարք ծեսեր երկու և ավելի դար հայոց կենցաղավարությունից դուրս են մնացել, մասնավորաբար՝ երկրի հոգևոր և աշխարհիկ առաջնորդների մասնակցությամբ գետում ջուր

օրհնելու ծիսակարգը և այդ առիթով կազմակերպվող հանդիսությունները:
Ատենախոսության համար կարևոր աղբյուր են հանդիսացել Հայ Եկեղեցու աստվածաբանական և եկեղեցագիտական մտքի ներկայացուցիչներ Ա. Տեր-Միքելյանի, Մաղաքիա արք. Օրմանյանի հիմնարար աշխատությունները:
Ազգային-եկեղեցական կյանքին, ի մասնավորի կանոնագիտական կտրվածքով անդրադառնալ իս անհնար է շրջանցել և ըստ արժանվույն չգնահատել Վ. Հակոբյանի խմբագրությամբ կազմված «Կանոնագիրք Հայոց»-ը: Կանոնագիտական առումով կարևոր է նաև Ա. Մխիթարյանցի «Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնագրութեամբք»աշխատությունը:
Ս. Ծննդյանն առնչվող տոմարագիտական նյութեր ենք քաղել միջնադարի մեծագույն տոմարագետ Անանիա Շիրակացու Հայտնության ճառից, ինչպես նաև մերօրյա գիտնականներ Ռ. Վարդանյանի «Հայոց տոնացույցը (4-18-րդ դդ.)», Լ. Սարգսյանի «Հայոց տոնացույցի ծագումն ու զարգացումը»աշխատություններից:
Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթագրքում Ս. Ծննդյան խորհրդի վերլուծությունը կատարելիս հիմք ենք ընդունել Մատյանի լավագույն հրատարակություններից մեկը (Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխատասիրութեամբ՝ Պ. Խաչատրյան, Ա. Ղազինյան, Երևան, 1981), ինչպես նաև Նարեկացու տաղերն ու գանձերը:
Միջնադարին վերաբերող աղբյուրներից օգտագործել ենք Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» կոթողային աշխատությունը, ինչպես նաև «Ոսկեփորիկ»և Քարոզգրքի «Ամառան» ու «Ձմերան» հատորները: Արժեքավոր նյութեր ենք քաղել «Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց» շարքից՝ թեմային առնչվող պարականոն բնույթի տվյալներ քաղելու համար:
Կարևոր են նաև XIX-XX դդ. և մեր օրերում կատարված ուսումնասիրությունները, որոնցից են «Սոփերք հայկականք» շարքը, Պ. Հովնանյանցի, Մ. Աղավնունու, Ն. Ակինյանի, Բ. Եղիայանի, Ն. Պողարյանի, Ա. Մանուկյանի, Ա. Արևշատյանի, Ե. Պետրոսյանի, Գ. Սերայդարյանի, Շ. Գալուստյանի, Ն. Վասիլիդասի, Գ. Սիմոնյանի, Ա. Օհանջանյանի և այլոց գործերը: Ս. Ծննդյան և Ջրօրհնեքի նախնական ծեսի մասին

հանգամանալից անդրադարձ կա Շառլ Ռընուի «Աստվածային տնութեան տօնը Երուսաղէմում Դ եւ Ե դարերում` ըստ Երուսաղէմի հայկական ճաշոց գրքի» ուսումնասիրության մեջ:

XIX դ. կեսից մինչև XX դ. նկարագրող ազգագրական բարձրարժեք նյութեր կան «Ազգագրական հանդէս»-ի էջերում: Բազմաթիվ են հայ ազգագրության սյուներից մեկի` Ե. Լալայանի ուսումնասիրությունները:

Նույն ժամանակաշրջանին վերաբերող կարևոր նյութեր կան «Էմինեան ազգագրական ժողովածու»-ի հատորներում: Կուզենանք առանձնացնել հատկապես Աղ. Մխիթարյանցի` Շիրակին նվիրված աշխատությունը:

«Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարը հարուստ է պատմական Հայաստանի և ներկայիս Հայաստանի հանրապետության բնակավայրերին առնչվող պատմա-ազգագրական նյութերով: Ազգագրության մեջ բարձր են գնահատվում դրանում տեղ գտած Ստեփան Լիսիցյանի, Բենսեի և այլոց գործերը:

Աղբյուրագիտական արժեք ունեցող, ինչպես նաև վերլուծական նյութեր ենք քաղել Ս. Մկրտչյանի «Տոները հայոց արդի կենցաղում (էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություն)», «Հայոց տոնածիսական մշակույթ» մենագրություններից, որոնք եզակի նյութեր են պարունակում խորհրդային Հայաստանի տոնածիսական կյանքի վերաբերյալ և վեր են հանում տոների էթնոսոցիոլոգիական պատկերը` մի քանի տասնամյակների ժամանակագրական ընդգրկմամբ` հասնելով մինչև մեր օրերը:

Տոնածիսական մի շարք հարցերի է անդրադարձել Լ. Սիմոնյանը «Տոմարային ծիսաշար. Տոմար. Ձմեռ. Նորի տարի և Սուրբ Ծնունդ» համակողմանի ուսումնասիրության մեջ: Ազգագրական բնույթի նյութեր ենք քաղել նաև Գ. Գալուստյանի, Ա. Ալպոյաճյանի, Ստ. Լիսիցյանի, Բդոյանի, Գ. Գյոզալյանի, Հ. Հովսեփյանի և այլ երախտավորների աշխատություններից:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության և հապավումների ցանկից: Ներածության մեջ ներկայացված են աշխատանքի նպատակը, խնդիրները, թեմային առնչվող աղբյուրագիտական և վերլուծական բնույթի գրականությունը, հիմնավորված են

անհրաժեշտությունը, արդիականությունը, կիրառական նշանակությունը, գիտական նորույթը:

**Առաջին գլուխը՝ «ՀԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԵՍԻԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲ»**, նվիրված է Մեսիայի ծննդյան և Աստվածհայտնության խորհուրդին և պատմությանը՝ Հին և Նոր Կտակարաններում, ապա՝ եկեղեցական ավանդության մեջ և պարականոն գրվածքներում: Որպես թեմայի շարունակություն և զարգացում՝ ներկայացված և վերլուծված է Ս.Ծննդյան խորհրդի արտացոլումը հայ մատենագրության գլուխգործոցներից մեկում՝ «Մատեան ողբերգութեան» պոեմում և Նարեկյան տաղերում:

Առաջին գլխի առաջին ենթագլխում նախ ներկայացված են Հիսուսի Ծննդյան մասին մարգարեությունները Հին Կտակարանում: Այն, ինչ Սուրբ Հոգու ներգործումով արձանագրվել-մարգարեացվել է Հին Կտակարանում, իր կատարումն է գտնում Նոր Կտակարանում: Այս առումով Հին և Նոր Կտակարանները ձայնակցում են միմյանց և կազմում մեկ կատարյալ ամբողջություն:

Նոր Կտակարանում իրականացած ենք տեսնում սպասված Մեսիայի վերաբերյալ մարգարեությունները: Ընդ որում՝ չորս Ավետարանիչները տարբեր հայեցակերպերով են ներկայացնում Հիսուս Քրիստոսի Ս.Ծնունդը և Աստվածհայտնությունը: Մատթեոսը տալիս է Հիսուսի ազգաբանությունը՝ Աբրահամից մինչև Դավիթ, Դավթից մինչև Բաբելոնի գերությունը և Բաբելոնից մինչև Քրիստոս: Մատթեոսի ազգաբանության մեջ շեշտվում է Փրկչի մարդկային կողմը՝Մարդու Որդի լինելը՝ Դավթի թագավորական ազգատոհմից: Ղուկասը Հիսուսի Ծննդյան պատմությունն սկսում է Հովհաննես Մկրտչի Ծննդյան ավետումով, ապա խոսում է Գաբրիել հրեշտակի կողմից Ս.Մարիամ կույսին տված աստվածային ավետիս-ողջույնի և այն մասին, մասնավորաբար, որ Ս. Մարիամից ծնվողը «...սուրբ է և Որդի Աստուծոյ կոչեսցի» (Ղուկ.,Ա 35):

Մարկոս Ավետարանիչը սկսում է Հովհաննես Մկրտչի՝Անապատում կանչողի ձայնով.«Պատրաստ արարէք զճանապարհ Տեառն» (Մարկ., Ա 3), այսինքն՝ Հիսուսին ներկայացնում է ավելի հասուն տարիքում՝ Հորդանանում մկրտվելիս, երբ Հիսուս տեսնում է. «Եւ նոյն ժամայն ընդ

վերանալ ի ջրոցն ետես ցելեալ զերկինս, եւ զՀոգին Աստուծոյ իբրեւ զաղավնի, զի իջանէր ի վերայ նորա» (Մարկ., Ա 10): Կարելի է ասել, որ Մարկոսը ներկայացնում է Հիսուսի կյանքի երկրորդ հանգրվանը՝ Ծնունդին հաջորդող Աստվածհայտնությունը: Ի տարբերություն նախորդ ավետարանիչների, Հովհաննեսն իր Ավետարանն սկսում է ոչ թե մարդացյալ Հիսուսի Ծնունդով, այլ այն Հիսուսով, որ մինչ այդ կոչվում էր նախահավիտյան Բանը և իր մարդեղացման ընթացքին կոչվեց Հիսուս Քրիստոս: Այսպիսով, Հովհաննեսն իր խոսքն սկսում է ոչ թե երկրից, այլ երկնքից. «Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն» (Հովհ., Ա 1): Այս ամենի մասին առաջին հերթին խոսվում է Ս. Ծննդյան և Աստվածհայտնության տոնի աստվածաշնչային հիմքերը ցույց տալու, ապա և տոնին առնչվող մի շարք արարողական-ծիսակարգային և ժողովրդական-ավանդութային տարրերի առկայությունն ու նշանակությունը հիմնավորելու և հասկանալու նպատակով:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում ներկայացված են Հիսուսի Ծննդյանը վերաբերող ուշագրավ մանրամասներ՝ պահպանված Սրբազան ավանդության մեջ: Ապոկրիֆ աղբյուրներում հիշատակվող Սալոմե մանկաբարձուհին անվանվում է պառավ կույս և Մարիամի ազգակից՝ սերված Դավթի ցեղից: Ըստ ապոկրիֆ աղբյուրների՝ նա վկայել է Աստվածածնի անարատության պահպանման վերաբերյալ: Նրա կերպարը դրսևորվել է Քրիստոսի Ծննդյանը նվիրված պատկերագրության և ժողովրդական սովորությունների մեջ:

Մեծ կարևորություն ունեն ազգագրական և բանահյուսական սկզբնաղբյուրներում տեղ գտած հիշատակումները, ինչպես Հովհաննես Մկրտչի և Սիմեոն Ծերունու՝ Հիսուսի կնքահայրը (քավոր) լինելու, Մարիամին օգնող մանկաբարձուհու և նրա անվան՝ Հուռումսիմա (անվան տարբերակներից մեկը), տաճարը՝ որպես Հիսուսի ծննդյան վայր լինելու վերաբերյալ հիշատակումները: Ուշագրավ են ավետիսներում հիշատակվող զուտ հայկական մոտիվները, ինչպես՝ մանկան ծնունդին սպասող Մարիամի՝ մեջքը խաչքարին հենած նստելը և այլն:

Հիսուսի Ծննդյան հետ կապված՝ հետաքրքիր և կարևոր տեղեկություններ են պահպանվել միջնադարյան աղբյուրներում: XIII դ.

ժամանակագիր Անանուն Սեբաստացին բացառիկ տեղեկություններ է հայտնում, որոնք վերաբերում են նորածին Հիսուսին այցելած մոգերին ուղեկցող զորքի թվաքանակին, Հիսուսի Ծննդյան օրվան,Հերովդեսի հրամանով Բեթղեհեմում կոտորված մանուկների թվին: Ժողովրդական «Ավետիս» երգերում նկարագրվում են Հիսուսի կնունքը, երանիները,ճանապարհորդությունը դեպի խնկի ծառ, ծառը կտրելու և բերելու շուրջ կատարվածը և այլն:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում ներկայացված են Քրիստոսի Ծննդյան մասին տեղեկություններ հաղորդող պարականոն գրքեր: Ծննդյան տոնի հետ կապված որոշ ծիսապաշտամունքային սովորույթներ ծագում են հենց այս աղբյուրներից: Անշուշտ, խոսքը Եկեղեցու կողմից ընդունված որոշ ավանդութ-յունների և հավաստի համարված պարականոնների մասին է` զանց առնելով գնոստիկյան կամ սուտանուն պարականոնները, որոնք մերժել է նաև Հայ Եկեղեցին: Մեզ հետաքրքրող` Փրկչի Ծննդյանը և Աստվածհայտնությանն առնչվող պարականոն գրքերից են Քրիստոսի տղայության գիրքը, Հակոբոսի նախաավետարանը, Մանկության Ավետարանը,որոնցում պատմվում է Ս.Մարիամի ծնողների,նրան Տաճարին ընծայելու,Գաբրիել հրեշտակի և Մարիամի երկխոսության, Սուրբ Հոգուց հղանալու, Մարիամի հոգեկան տվայտանքների, Հիսուսին ծնելու, Եգիպտոս փախչելու, այնտեղից վերադառնալու, մանուկ Հիսուսի գործած հրաշքների և Փրկչի կյանքի այլևայլ հանգրվանների մասին:

Առաջին գլխի չորրորդ ենթագլխում ներկայացված է Ս. Ծննդյան և Աստված-հայտնության տոնի ընկալումը և բանաստեղծական մարմնավորմանը Գրիգոր Նարե-կացու կողմից:Թեև չի կարելի առանձնացնել մի որևէ գլուխ` նվիրված հատկապես Աստվածհայտնությանը,բայց նյութին առնչվող բազմաթիվ մեկնողական ու բանաստեղծական արտահայտություններ ու նույնիսկ պարբե-րություններ կան,որոնք ցայսօր ամբողջական հետազոտության չեն ենթարկվել ,մինչդեռ դրա կարիքն ու անհրաժեշտությունը կա: Ուստի և Աստվածհայտնության խորհրդի, նրա ընկալման մասին խոսելիս հնարավոր չեղավ շրջանցել Նարեկացու Աղոթագիրքը, որի 95 գլուխներում սփռված բանաստեղծական մեկնություններն ու

դավանանքային ձևակերպումները հույժ կարևոր նշանակություններ ունեն՝ որպես հայ դավանական-աստվածաբանական մտքի արտահայ-տություններ:

**Երկրորդ գլխում՝ «ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ՋՐՕՐՀՆԵՔԻ ԿԱՆՈՆԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՏՈՆԱ-ՑՈՒՅՑՈՒՄ (ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)»,** քննվում են Ս. Ծննդյան և Աստվածհայտնության, ինչպես նաև Ջրօրհնեքի կանոնների տոնացուցային զարգացումները՝ սկսած IV դ-ից մինչև տոնացույցի վերջին՝ Սիմեոն Երևանցու 1774 թ. կատարած խմբագրությունը:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում ներկայացված են Սուրբ Ծննդյան և Աստված-հայտնության կանոնի տոնացուցային զարգացումները: Ընդհանրական եկեղեցին տարեսկիզբ է ընդունել Հիսուս Քրիստոսի Ծննդյան օրը, որը որոշ եկեղեցիներ համարում են դեկտեմբերի 25-ը, մյուսները՝ հունվարի 6-ը: Այդ ամսաթվերի՝ Հիսուսի Ծննդյան օր լինելու հետ կապված կան տարբեր մոտեցումներ, որոնք բխում են հաշվումների տարբեր սկզբնակետերից:

Հռոմի եկեղեցին 336-ին, որպես Հիսուս Քրիստոսի Ծննդյան օր, ընդունել է դեկտեմբերի 25-ը, իսկ Մկրտությունը՝ հունվարի 6-ը: Այդ մասին տեղեկանում ենք հռոմեական եկեղեցու Ֆիլոկալյան կոչվող օրացույցից:Այդ որոշումն ուներ քաղաքական, բարոյական և տոմարագիտական որոշ պատճառներ: Հեթանոսներն այդ օրը տոնակատարում էին արևի դից Միհրի տոնը: Հիսուսի՝ Կենդանի Արեգակի Ծննդյան տոնն իր խորհրդով վերահիմաստավորում էր արևադարձային այդ շրջանը: Քրիստոսի Ծնունդը դեկտեմբերի 25-ին սկսեցին տոնել նախ՝ Արևմուտքում, ապա՝ Արևելքում: Արևելքում, մինչև IV դ., Ծննդյան տոնը կապվել է Աստվածհայտնության՝ Մկրտության տոնի հետ,որը նշվել է հունվարի 6-ին: IV դ. վերջին՝ Նիկիայի ժողովից 50 տարի անց, որտեղ կարգավորվել էր Զատիկը տոնելու հարցը, Հռոմի քահանայապետն առաջարկել է Արևելքում ևս Ծնունդը դեկտեմբերի 25-ին տոնել: Սակայն Արևելյան եկեղեցիները շարունակել են Ծնունդը և Աստվածհայտնությունը տոնել միասնաբար՝ հունվարի 6-ին: Սա հաստատվում է բազմաթիվ փաստերով. ա) Հովհաննես Կասիանոս վանականը (V դ.) հունվարի 6-ին Եգիպտոսում ներկա է գտնվել կրոնական արարողությունների, նաև Փրկչի

ծննդյան տոնակատարությանը, բ) Ս. Եփրեմ Խուրի Ասորին (IV դ.) հիշատակում է, որ Միջագետքի եկեղեցին Ս. Ծնունդը նշում է հունվարի 6-ին, գ) Կ. Պոլսի եկեղեցում, մինչև 379 թ., Ս. Ծննդյան կամ Աստվածհայտնության տոնը կատարվել է հունվարի 6-ին, դ) Կապադովկիայում, մինչև 380 թ., Աստվածհայտնությունը նշվել է հունվարի 6-ին, ինչպես երևում է Գրիգոր Նյուսացու՝ ս. Բարսեղի մահվան առթիվ ասված դամբանականից, ե) Անտիոքում նույնպես, մինչև 386 թ., տոնը կատարվել է հունվարի 6-ին, զ) Ղազար Փարպեցին (V դ.) ևս հիշատակում է, որ հայերը կատարում են «Փրկչի տոները»՝ նկատի ունենալով Ս. Ծնունդը և Ս. Հարությունը: Նախնական եկեղեցիների կողմից հունվարի 6-ը՝ որպես Փրկչի Ծննդյան և Մկրտության միասնական տոնախմբման օր նշելը վկայվում է մեկ այլ ծանրակշիռ աղբյուրով՝ Երուսաղեմի հայկական Ճաշոց ծիսամատյանով:

Աստվածհայտնության տոնը շարունակվել է հունվարի 6-ի առավոտյան և տևել ութ օր՝ ըստ էության շարունակելով բացահայտել հունվարի 5-ի լույս 6-ի գիշերը՝ Ճրագալույցին, դրսևորված Ս. Սպասման (Քրիստոսի Գալստյան սպասման) Փրկչական խորհուրդը: Ապաքրիստոնյա համայնքն այցելել է Քրիստոսի Ծննդյան և Աստվածհայտնության խորհրդի հետ կապված բոլոր այն վայրերը, որոնք նկարագրվում են Ղուկասի Ավետարանում:

Այս ենթագլխում անդրադարձել ենք նաև այն հարցին, թե ինչո՞ւ են հատկապես Հարության ճրագալույցին բնորոշ հիշյալ երեք ընթերցվածները մուտք գործել Աստվածհայտնության տոնի ծիսական արարողակարգ: Փրկչի երկրային կյանքի որևէ դրվագ չէր կարող անջատ լինել ոչ միայն փրկագործության իրականացումից՝ Հարությունից, այլև Փրկչի կյանքի ու փրկագործ տնօրինությունների հետ կապված մյուս իրադարձություններից՝ ս. Կույս Մարիամին տրված հրեշտակային ավետումից, Ս. Կույսի՝ Եղիսաբեթին կատարած այցից, ութօրյա մանուկ Հիսուսի թլփատումից, Հիսուսի՝ Հորդանանում մկրտվելուց և այլն: Ուստի և տոնի կատարման ընթացքում հիշատակվում են նաև ավետարանական այդ դրվագները՝ ցույց տալու համար Փրկչի Ծննդյան խորհրդի ողջ հրաշքը ու անհունությունը՝ իբրև բոլոր սուրբ խորհուրդների սկիզբը:

Ներկայացրել ենք Սուրբ Ծննդյան կանոնական շաբաթապահիքը և Հիսնակաց ոչ կանոնական

պահքը: Քրիստոսի Ծննդյան կամ Հայտնության պահքը հայոց եկեղեցական տարվա վերջին պահքն է: Այն սկսվում է դեկտեմբերի 29-ին՝ երեկոյան ժամերգությունից հետո, Նավակատիքով մեղմանում է հունվարի 5-ի երեկոյան՝ ճրագալույցից հետո, և ավարտվում հունվարի 6-ին՝ Ծննդյան Պատարագից և Ջրօրհնեքից հետո: Բացի Ծննդյան ութօրյա պահքից, հայոց մեջ տարածված է եղել նաև Ծննդյանը նախորդող Հիսնակաց պահքը: Թե՛ արևմտյան եկեղեցիները և թե՛ Հայ Եկեղեցին Ս. Ծննդյան տոնին սկսել են պատրաստվել ավելի վաղ: Հայ Եկեղեցին դեռևս դարեր առաջ տնօրինել է, որ տոնից յոթ շաբաթ առաջ մարդիկ հոգեպես պատրաստվեն: Ինչպես վկայում են հին ծիսական մատյանները (Ճաշոց, Տոնացույց, Ժամագիրք), Աստվածհայտնության տոնից առաջ սահմանված է եղել, ինչպես որ Հարությունից առաջ, հիսնօրյա պահեցողության շրջան, որ հետագայում բաժանվել է երեք շաբաթապահքերի:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ ներկայացված են Ջրօրհնեքի կանոնի տոնացուցային զարգացումները: Հոգևորբարեպաշտական այս արարողությունը՝ Հայտնության տոնին ջուր օրհնելը և հավատացյալներին բաժանելը, կանոնականացվել է Դվինի 719 թ. ժողովում: Ջրօրհնեքի արարողությունը, որը խորհրդանշում է Քրիստոսի Մկրտությունը, անբաժան է Ս. Ծննդյան արարողությունից: Ջրօրհնեքի ծեսը, ինչպես վկայում է Մաշտոց ծիսարանի «Օրհնությունաբեր ցուցակ»-ը, հեղինակել է Բարսեղ Կեսարացին, իսկ Սահակ Պարթևի հրամանով թարգմանել է և Հայաստան է բերել Խոսրով թարգմանիչը: Ջրօրհնեքը նախապես կատարվել է Երուսաղեմում՝ Հորդանան գետի եզերքին: Ինչպես երևում է հայոց ծիսակարգից, Հայ Եկեղեցին հավատարիմ է մնացել հինավուրց ավանդույթին: Հայ Եկեղեցու հայրերը մշտապես պայքարել են սույն ավանդույթի պահպանման համար՝ նրա մեջ տեսնելով ոչ թե սոսկ ավանդույթի շարունակման խնդիր, այլ նաև կարևորագույն այն հանգամանքը, որ Աստվածհայտնությունը սերտորեն կապված է Մկրտությանը, որով էլ հայտնվում է, թե Հիսուսն է Քրիստոսը՝ Աստծո Օծյալը:

Հաջորդ ենթագլխում նշված են Ջրօրհնեքի հետ կապված շարականները, կցուրդները, որոնք տոնի խորհրդի ընկալման համար ունեն առանձնակի արժեք: Դրանք նաև հայ քրիստոնեական-

դավանաբանական մտքի և Աստծո Խոսքի հոգևոր-այլաբանական-խորհրդական ընկալման ցայտուն արտահայտություններ են: Այսպես, ութնօրյակի ընթացքում, յուրաքանչյուր օրվա համար Ճարակնոցը սահմանում է շարականներ, որոնք հիմնականում վերագրվում են Մովսես Քերթողին (Մովսես Խորենացուն): Առաջին օրվա համար՝ «Այսօր Բանն ի Հօրէ անմեկնելի...», «Քրիստոս ծնեալ այսօր...» և այլն, երրորդ օրվա համար՝ «Էակից Հօր և Հոգւոյն անսկիզբն...», «Հրաշափառ ծնունդ քո...», չորրորդ օրվա համար՝ «Այսօր Գաբրիէլ ցնծութեամբ...», հինգերորդ օրվա համար՝ «Այսօր որ յաթոռ փառաց...», վեցերորդ օրվա համար՝ «Լոյս լուսոյ մայր եւ կենարար...», յոթերորդ օրվա՝ «Անեղանելի բնութիւն...», «Սուրբ եւ Աստուածածին Մարիամ...», «Որ զհուրն Աստուած յորովայնի...», «Ի ձայն փողոյ գալստեան...»: Ութերորդ օրը՝ ավարտին, երգվում են «Լոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար...», «Ծագումն հրաշալի...», «Ուրախ լեր, Մարիամ սուրբ...», «Առաքելոյ աղաւնոյ իջանելով...» շարականները: Սուրբ հայրերի կցուրդներն ու շարականները՝ նվիրված Աստվածհայտնության տոնին, մտցվել են տվյալ օրվա կանոնի մեջ (կանոնականացվել են), հարստացրել Հայ Եկեղեցու ծիսակարգը՝ բազմակողմանիորեն անդրադառնալով աստվածային Բանի խորհուրդներին, ցույց տալով, որ քրիստոնեությունը ոչ թե սոսկ վարդապետություն է, այլ իր նախնական և ստույգ իմաստով՝ օծյալություն, օծյալ հոգեվիճակ (*քրիստոնյա* բառը, ըստ էության, նշանակում է Քրիստոսով՝ Օծյալով օծված մարդ):

**Երրորդ գլուխը՝ «ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ և ՋՐՕՐՀՆԵՔԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ»,** վեր է հանում Ս. Ծննդյան ժողովրդական ծեսերը՝ ըստ Տոնապատճառ, Ճաշոց և Հայսմավուրք ժողովածուների, V-XVIII դդ. մատենագրական աղբյուրների և XIX դ. վերջից մինչև XX դ. սկիզբն ընդգրկող ժամանակահատվածի ազգագրական նյութերի:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում ներկայացված է Սուրբ Ծնունդը և Ջրօրհնեքը՝ ըստ Տոնապատճառների: Տոնապատճառում ընդգրկված նյութերը՝ լուծումներ, վկայաբանություններ և այլն, ունեն մեկնողական-աստվածաբանական վերլուծության, հրահանգի բնույթ և սկզբնապես կոչվել են «Մեկնութիւն ընթերցուածոց»: Այն հարցին, թե ինչու է կատարվում Ծննդյան տոնը և ինչու հենց նշյալ ծիսակարգով

(կանոններով), լավագույնս պատասխանում են Տոնապատճառ ժողովածուները: Դրանցում ներկայացված են Ծննդյան օրերի (ութօրեքի) ընթերցումները և դրանք ընտրելու պատճառները: Տոնապատճառներում մերժվում է տոնի բաժանումը.միակարծություն կա Ծննդյան և Աստվածհայտնության տոնը մեկ միասնական օրով՝ հունվարի 6-ին տոնախմբելու վերաբերյալ:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում ներկայացված են Ս. Ծննդյան և Ջրօրհնեքի ծեսերն ըստ Ճաշոց ծիսամատյանի:Ճաշոցներում Աստվածհայտնության տոնին վերաբերող մասերի դիտարկումներից կարելի է եզրակացնել, որ այդ տոնի հայկական ընկալումը հարազատ է մի հինավուրց առաքելական ավանդույթի, որը զարգացվել է և ճոխացվել նորանոր պատշաճեցումներով, մինչ ձեռք է բերել իր ժամանակակից ծիսական կազմն ու բովանդակությունը: Իբրև ասվածի վկայություն՝ արժե հիշատակել Շառլ Ռընուի՝ վերընշված ուսումնասիրությունը:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում ներկայացված են Ս. Ծննդյան և Ջրօրհնեքի ծեսերը Հայսմավուրք ժողովածուներում: Դրանք մեծապես հայացված և ազգայնացված ժողովածուներ են՝ լի ժողովրդական սովորույթների ու բարքերի նկարագրություններով, ի տարբերություն վերոնշյալ ծիսական ժողովածուների: Իհարկե, Հայսմավուրքների բուն նպատակն է օր առ օր նշել (պատմել) սրբերի կյանքը, եկեղեցական տարվա օրերին պատշաճեցված վարք և վկայաբանությունները:

Հայոց Հայսմավունքը կազմավորվել է V-XV դդ. ընթացքում: Հայսմավուրքների, եթե կարելի է այդպես անվանել, «ժողովրդական» բնույթը թույլ է տալիս տոներն ու պահքերը տեսնել իրենց ազգագրական և ավանդութային ձևերի մեջ, վեր հանել դրանց տեղային, պատմական և համաքրիստոնեական կողմերը: Հայսմավուրքային խմբագրությունները հիմնականում չորսն են՝ 1. Տեր Իսրայել Խաչենցու (XIII դ.), 2. Կիրակոս Գանձակեցու (1252 թ.), 3. Գրիգոր Է. Անավարզեցու (XIII-XIV դդ.), 4. Գրիգոր Խլաթեցու (1349-1425 թթ.): Ս. Ծնունդն ու Աստվածհայտնությունը միանշանակ դրված է հունվարի 6-ին (Քաղոցի ԻԹ): Տոնին նախորդում են մի շարք սրբերի հիշատակի օրեր. «Քաղոցի ԺԷ եւ դեկտեմբերի Ի եւ տօն է Դաւթի մարգարէին եւ

Յակոբայ տեառնեղբօրն...: Քաղոցի ԻԹ եւ յունուարի Զ տօն Է Ծննդեան եւ Յայտնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Ի սմին աւուր յիշատակ սքանչելեաց նոր եղև ի Գետարգել ս. Նշանէն, ձեռամբ Պետրոսի կաթողիկոսին հայոց յամի ԴՃ եւ ՅԳ թուականիս հայոց առաջի մեծ կայսերն Վասլի ի Տրապիզոն քաղաքի, զի գնաց առ արքայն մինչ ի տօն յայտնութեան: Պատճառից եւ գիտելի է, զի առաջին օր տօնիս պատկեր է առաջին աւուր արարչութեան»:

Տոնին նախորդող հիշատակումներն ու վկայաբանությունններն ունեն հատուկ դասավորություն՝ Դավթի (որի թագավորական ազգատոհմից է Հիսուսը) հիշատակումով, մինչև Պետրոս Ագետադարձի հիշատակումը: Նրա անվան հետ է կապված նաև Տրապիզոնում բյուզանդական կայսեր և ավագանու ներկայությամբ կատարած Ջրօրհնեքի արարողությունը, որի ժամանակ, ավանդապատում ի համաձայն, գետի հոսանքը կանգ է առել, ապա ետդարձել, երբ կաթողիկոսը լուսավորչավանդ սուրբ մյուռոնը հեղել է գետի մեջ. դա ցույց էր տալիս հայոց հավատքի զորությունը և առավելությունը՝ բյուզանդականի համեմատությամբ, հայոց մյուռոնի գերազանց սրբությունը: Սաէլ, իր հերթին, ցույց էր տալիս հայոց դիրքորոշումը Ս. Ծննդյան տոնի նկատմամբ, հայոց դավանանքի ճշմարտացիությունը և հնավանդ սրբությունը:

Երրորդ գլխի չորրորդ ենթագլխում՝ «Սուրբ Ծննդյան և Ջրօրհնեքի հիշատակումները մատենագրական աղբյուրներում» ներկայացված են հայ ինքնուրույն մատենագրության մեջ առկա այն հուշարձանները, որոնցում նկարագրված են Ս. Ծննդյան տոնակատարությունը կամ Ջրօրհնեքի կարգը: Մատենագրական աղբյուրներում, մասնավորապես պատմիչների և ժամանակագիրների երկերում, պահպանվել են տոների հիշատակումներ: Սույն ատենախոսության մեջ կանգ ենք առել Ս. Ծննդյան տոնին և Ջրօրհնյաց հանդեսին առնչվող պատմական, դավանաբանական, ինչպես նաև եկեղեցական և ժողովրդական ծիսակարգերին վերաբերող դրվագների վրա, որոնք բազմաթիվ են: Ուշագրավ է հատկապես օտար տիրապետողների մասնակցությունը Ջրօրհնյաց հանդեսին: Հետաքրքրական են այդ ժամանակ կատարվող հրաշախառն դեպքերը: Հատկանշական է, որ համաձայն Ագաթանգեղոսի, 303-ին՝ հունվարի 6-ի առավոտյան՝ Ս. Ծննդյան և Աստվածհայտնության օրը (հանգամանք, որը ևս

մեկ անգամ շեշտում է, որ նշյալ տոնն արդեն իսկ ընդունված էր հայոց մեջ և կատարվում էր), Լուսավորիչը Արածանիում մկրտում է Տրդատ Մեծին ու արքունիքին, նաև յոթ օրերի ընթացքում՝ արքունական զորքին ու ժողովրդին: Համաձայն մատենագրական շատուշատ աղբյուրների՝ դեռևս XVII դ. Ջրօրհնեքի հանդեսը գետում է կատարվել: Աստվածհայտնությունը դավանաբանական, ինչու չէ, նաև գեղարվեստական արտացոլում է գտել նաև շարականերգության մեջ:

Երրորդ գլխի հինգերորդ ենթագլխում՝ «Սուրբ Ծննդյան ժողովրդական սովորույթներն ազգագրական սկզբնաղբյուրներում (XIX դ. վերջից մինչև XX դ. սկիզբ)» ներկայացված են Ս. Ծննդյան և Աստվածհայտնության տոնին միահյուսված ժողովրդական սովորույթները: Հայ ժողովրդի կենցաղավարության մեջ Ծննդյան և Աստվածհայտնության տոնը եկեղեցական ծեսերի և ազգային սովորույթների մի ուրույն համակարգ էր: Այս տոնում առանցքայինը ս. Պատարագի ծիսակարգն էր: Հավատացյալ ժողովուրդը եկեղեցի էր գնում և՛ նախորդ օրը՝ երեկոյան՝ մասնակցելու Ճրագալույցի Պատարագի, և՛ Ծննդյան օրը, երբ կատարվում էր նաև Ջրօրհնեքի կարգը: Հունվարի 6-ի Պատարագին ժողովրդի համար մեծ հանդիսություն էր Ջրօրհնյաց կարգը և Խաչի քավորի ընտրությունը: Եկեղեցական արարողությունների շուրջ ժողովուրդը կազմել էր իր ազգային սովորույթները՝ յուրահատուկ ուտեստներով, երգերով, խաղերով:

Ժողովրդական սովորույթներից հիմնական տարածվածներն էին բաղարջ հացի պատրաստումը, Թաթախման գիշերվա ընթրիքը, Ավետիսները և այլն:

Դարեր շարունակ Եկեղեցին այն հաստատությունն էր, որը պահում էր հայոց տոնական համակարգը՝ տարրալուծելով քրիստոնեական-եկեղեցական և ազգային-ժողովրդական սովորույթները: Իրավիճակը փոխվեց XX դ. երկրորդ քառորդից սկսած: 1918 թ. ստեղծված Հայաստանի Առաջին Հանրապետությունը իր գոյատևման տարիներին դարձավ հայոց տոնածիսական համակարգի պահպանման գլխավոր երաշխիքը: Դարեր ի վեր գոյատևող հայոց տոնածիսական համակարգը փոփոխություն կրեց Խորհրդային միության եկեղեցահալած տարիներին: Եկեղեցական

տոները հանվեցին պետական տոնացույցից: 1980-ական թթ. սկիզբ առած ազգային զարթոնքը արտահայտվեց նաև ավանդական շատ տոների վերականգնումով: Հայաստանի Երրորդ հանրապետությունը,որ չուներ հակակրոնական ուղղվածություն, տոնացույցում ամրագրեց եկեղեցական և ազգային մի շարք տոներ: Պետական տոնացույցում անմիջապես հաստատվեց Ս.Ծննդյան և Աստվածհայտնության տոնը:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ** տրված են ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները.

▪Հին Կտակարանն ակնարկում է Հիսուսի Ծննդյան և Հայտնության,Նրա տնօրինությունների մասին.Հիսուսի Գալստյան բուն նպատակը, ժամանակը, Գալստյան նախապատրաստումը, սքանչելագործ Ծնունդը,ինչպես նաև մասնավոր դեպքեր՝ Ծննդյան վայրը, մոգերի երկրպագությունը, ս. ընտանիքի փախուստը դեպի Եգիպտոս, մանուկների կոտորածը, Նազովրեցի կոչվելը և այլն: Այն,ինչ Սուրբ Հոգու ներգործումով մարգարեացվել է Հին Կտակարանում, իր կատարումն է գտնում Նոր Կտակարանում: Այս առումով Հին և Նոր Կտակարանները ձայնակցում են միմյանց և կազմում մեկ կատարյալ ամբողջություն:

Մարգարեացված են նաև Հիսուս Քրիստոսի տնօրինական-փրկչական առաքելության մյուս կողմերը.Քրիստոս՝ ուղարկված Հորից,որպես Արդար Դատավոր՝ ըստ Մելքիսեդեկի կարգի, որպես մարգարե՝ Մովսեսի նման,որպես թագավորների թագավոր, ժողովուրդների և հավիտենության թագավոր և այլն,որոնցով Նա իրականացրեց և իրականացնում է Աստծու և մարդու միջև կնքված Նոր Ուխտը:

▪Հիսուսի Ծննդյան պատմաաստվածաբանական հայեցակետերի ուսումնասիրության համար հույժ կարևոր են Աստվածաշնչից դուրս մնացած որոշ պարականոններ: Դրանցում ոչ միայն կրկնվում են կանոնիկ Ավետարաններում տեղ գտած դեպքերը, այլև հիշատակվում են ուշագրավ դրվագներ և արդեն հայտնի պատումների հավելյալ մանրամասներ,որոնք բացակայում են կանոնական աղբյուրում: Այդպիսիք են Ավետման օրվա, Մարիամի Ծնունդն ընդունող մանկաբարձուհու՝ Սողոմեի, վերջինիս կողմից Հիսուսին երկրպագելու, Հիսուսի՝ մայրական կաթով սնվելու,հրեշտակի կողմից Սողոմեին արված

զգուշացման (այն մասին, որ մինչև քառասնօրյա տաճարին ընծայումը, Հերովդես արքայից մանկան Ծնունդը գաղտնի պահվի), Տիրոջ Ծննդյան մասին հովիվներին տրվող Ավետիսի, մոգերի կողմից նորածին Մանկանը տրված այլ ընծաների (նարդոս, մարգարիտ, բեհեզ, ծիրանի), մոգերին ուղեկցող զորավարների անունների, Հիսուսին այցելած հովիվների, Օգոստոս կայսեր աշխարհագրի մասին հիշատակումները:

▪Պարականոնների հաղորդած նյութն է՛լ ավելի արժեքավոր են դարձնում աստվածաբանական բնույթի պատումները: Այդպիսին է, օրինակ, Աստծու մատով գրված ու կնքված (փակված) վաղնջական գիրը՝ տրված Ադամին: Ըստ այդ գրի՝ Աստված նրան խոստացել էր աշխարհ ուղարկել իր Միածին Որդուն, Ով, միավորվելով անկյալ մարդուն (Ադամին), նրան պետք է շնորհեր բարձրագույն կոչումը՝ «անմահացեալ մարմնով՝ Աստուած…»:

▪Աստվածաբանական առումով կարևոր է Հովսեփի տեսիլքը, երբ նրան հայտնվում է Եվան և ասում, որ եկել է՝ իր փրկությունը տեսնելու, Նախամոր այցը նորածին Հիսուսին և Նրան իր գիրկն առնելը, ինչպես նաև երեք մոգերի տեսիլքները Հիսուսի չարչարանքների և երկնային արքայության մասին:

▪Հիսուսի Ծննդյան մասին Եկեղեցական սրբազան Ավանդության մեջ պահպանված մանրամասները կարևորվում են մի քանի տեսանկյուններից. նախ՝ դրանք որոշ չափով լրացնում են Հիսուսի Ծննդյան պատմությունը, ապա՝ մատնանշում են դեպքեր, որոնք առնչվում են աստվածաբանական հարցերի (օրինակ՝ Մանկաբարձուհի Սալոմեի վկայությունը՝ Մարիամի անարատ հղության մասին), երրորդ՝ կարևոր աղբյուր են հանդիսանում տոնի կատարման ժամկետի վերաբերյալ (օրինակ՝ Ծննդյան տոնը կատարվել է դեռևս առաջին դարերում) և այլն:

▪Եկեղեցական սրբազան ավանդությունից զատ, մեծ կարևորություն ունեն հայ ժողովրդական բանահյուսության մեջ տեղ գտած հիշատակումները, որոնք մինչև XIX դ. վերջերը և XX դ. սկզբները (մինչև բանահավաքների և ազգագրագետների կողմից գրի առնվելը) փոխանցվել են բանավոր կերպով: Այդպիսիք են, օրինակ, Ծննդյան ավետիսներում և ավանդազրույցներում սփռված վկայությունները՝ Հովհաննես Մկրտչի և Սիմեոն Ծերունու՝ Հիսուսի կնքահայրը (քավոր) լինելու, Մարիամին օգնող մանկաբարձուհու, վերջինիս

անվան (Հուռումսիմա՝ անվան տարբերակներից մեկը), տաճարը՝ որպես Հիսուսի ծննդյան վայր լինելու վերաբերյալ հիշատակումները: Ուշագրավ են ավետիսներում առկա զուտ հայկական մոտիվները, ինչպես՝ մանկան ծնունդին սպասող Մարիամի՝ մեջքը խաչքարին հենած նստելը և այլն: Վերոբերյալ տվյալները է՛լ ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ դրանցում կան այլ աղբյուրներում բացակայող եզակի մանրամասներ, որոնք, որպես բանավոր ավանդություն, դարեր ի վեր կենցաղավարել են հայ ժողովրդի մեջ:

▪ Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթագիրքը, լինելով մարդկայինի ու աստվածայինի, հոգևորի և նյութականի, ժամանակավորի և հավիտենականի հատման վեհագույն մի միջոց, հարուստ նյութ է տալիս Աստված-մարդ ուղին հարթող Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության խորհուրդի վերաբերյալ: Թեև չի կարելի առանձնացնել մի որևէ գլուխ՝ նվիրված հատկապես Աստվածհայտնությանը, բայց նյութին առնչվող բազմաթիվ մեկնողական ու բանաստեղծական դրվագներ կան, որոնք անուղղակիորեն հակաճառում են Քրիստոսի Ծնունդը և Աստվածհայտնությունը միմյանցից անջատ դիտելու մտայնությանը: Հորը «փառակից», բնությամբ՝ «նույնագոյ», «միով կամաւք», «լուսոյ ճառագայթ», «արքաերկնաւոր», «սկիզբն» և «կատարած» Քրիստոս նույն «ահաւոր», «անճառ», «անսահման» (անսահմանելի) Աստվածն է, Ով, հանուն մեր փրկության, մարմնացել է: Մարդացյալ Բանի Հայտնության խորհրդի, աստվածային ծրագրի, մարդեղության բուն նպատակի և հարակից այլևայլ հարցերի վերաբերյալ «Մատեան»-ում բազմաթիվ բանաստեղծական մեկնություններ ու ձևակերպումներ կան, որոնք հաճախ առնչվում են քրիստոսաբանական հիմնական խնդրին՝ Աստծու և մարդու գոյաբանական միակցությանը (մե՞կ բնություն, թե՞ երկու):

▪ XII-XIII դդ. տոնապատճառներում միակարծություն կա Ծննդյան և Աստվածհայտնության տոնը մեկ միասնական օրով՝ հունվարի 6-ին տոնախմբելու վերաբերյալ: Սա ևս մեկ անգամ փաստում է տոները միասնաբար կատարելու հարցում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դիրքորոշումը մի ժամանակաշրջանում, երբ հերթական անգամ Հայ Եկեղեցուն առաջադրվում էր ծիսական և

դավանաբանական զիջումների գնալ Կաթոլիկ Եկեղեցու նկատմամբ:

▪Ճաշոցների՝ Աստվածհայտնության տոնին վերաբերող մասերի դիտարկումների ընդհանրացումը թույլ է տալիս եզրակացնել, որ այդ տոնի հայկական ընկալումը հարազատ է մի հինավուրց առաքելական ավանդույթի, որը զարգացվել է և ճոխացվել նորանոր պատշաճեցումներով, մինչև ձեռք է բերել իր ժամանակակից ծիսական կազմն ու բովանդակությունը:

▪Հայկական Հայսմավուրքը, ունենալով տարբեր խմբագրություններ և ժամանակի ընթացքում հարստացվելով վկայաբանություններով ու ազգային դիմագիծը շեշտող դրվագներով, ձեռք է բերել ոչ միայն ծիսակարգային, այլ և պատմական ու ազգային բնույթի ժողովածուի նշանակություն:

▪Ատենախոսությունում տեղ գտած ձեռագրերի տվյալները (Մաշտոց ծիսամատյաններ, Ճաշոց, Հայսմավուրք, Տոնապատճառ, Ճառընտիր ժողովածուներ, Տոնացույցեր) փաստում են, որ X-XI մինչև XVIII դդ. Հայ Առաքելական Ս. Եկեղեցին պաշտոնապես Ս. Ծնունդը և Աստվածհայտնությունը նշել է միասնաբար՝ հունվարի 6-ին:

▪Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության տոնին վերաբերող հարուստ նյութեր են պահպանված հայ պատմագրության մեջ:

Հիսուսի Ծննդյան հետ կապված հետաքրքրական հիշատակումներ կան XIII դ. հայ մատենագրության մի պատառիկում: Բացառիկ են, հատկապես, նորածին Հիսուսին այցելած մոգերին ուղեկցող զորքի, Հերովդեսի հրամանով կոտորված մանուկների թվերը՝ համապատասխանաբար՝ 12000 և 1462, որոնց մասին կանոնական աղբյուրներում որևէ ակնարկ չկա:

▪Հայ պատմագրության մեջ Հիսուսի Ծննդյանը վերաբերող տեղեկությունները բազմազան են և կրկնում են թե՛ Ավետարաններում հիշատակված դեպքերը, թե՛ հարակից տեղեկություններ: Դրանցից են, օրինակ, Օգոստոս կայսեր ժամանակ Հայաստանը հռոմեացիներին հարկատու դառնալու պատճառով կայսեր կողմից անցկացվելիք աշխարհագրին Հայաստանի մասնակցությունը և այդ առթիվ Հայաստան եկած գործակալների կողմից այստեղ Օգոստոս կայսեր պատկերը կանգնեցնելը: Հենց

այդ ժամանակներում է լինում Հիսուս Քրիստոսի՝ Աստծու Որդու Ծնունդը:

▪ V-XVIIII դդ. հայ պատմիչների երկերում և ժամանակագիրների մոտ պահպանված հիշատակումներն առավելաբար վերաբերում են Ջրօրհնյաց հանդեսին:

▪ Ժամանակագիրների մոտ Ծննդյան և Աստվածահայտնության տոնը հիմնականում հիշատակվում է որպես ժամանակը փաստող դեպք՝ մատնանշելով պատմական որևէ հիշարժան անցքի, բնական աղետի և այլ իրադարձության կատարման ժամանակը: Օրինակ՝ ռազմական հաղթանակի հիշատակը մշտարթուն պահելու համար դրա կապակցումը Ծննդյան և Հայտնության տոնին, քանի որ աստվածային այդ տոնն անանց է:

▪ Պատմիչների հիշատակումները մի քանի խմբի կարելի է բաժանել: Նախ՝ դրանք առնչվում են Ծնունդն ու Աստվածահայտնությունը միասնաբար նշելու հարցին, երկրորդ՝ անդրադառնում են Ջրօրհնեքի ժամանակ կատարվող հրաշախառն դեպքերին՝ այդպիսով շեշտադրելով Աստվածահայտնությունը, երրորդ՝ վերաբերում են Ջրօրհնյաց հանդեսի ծիսակարգին, չորրորդ՝ կապվում են պատմաքաղաքական դեպքերի հետ:

▪ Հայոց մեջ Ջրօրհնեքի արարողությունը կատարվել է հունվարի 6-ին՝ որպես Սուրբ Ծննդի և Աստվածահայտնության տոնի մի մաս: Ջրօրհնյաց հանդիսությունը տարեկան տոնական համակարգում եղել է այն կարևոր առիթներից մեկը, որը համախմբել է երկրի հոգևոր և աշխարհիկ առաջնորդներին ու ժողովրդին: Հայաստանում քրիստոնեության ընդունման սկզբից՝ IV դարից (Գրիգոր Լուսավորչի կողմից Արածանիում արքունական ընտանիքին և ժողովրդին մկրտելը), մինչև XVIII դ. (Աբրահամ Կրետացի կաթողիկոսի կողմից Մուղանում՝ Երասխ և Քուր գետերի միախառնվելու վայրում) գետում Ջրօրհնյաց հանդեսը կատարելն ընդունված կարգ է եղել՝ երկրի հոգևոր և աշխարհական առաջնորդների, իշխանների, հոգևոր դասի և ժողովրդի ներկայությամբ: Ահա այս առիթն օգտագործելով՝ շատ դեպքերում հայոց ազգի թշնամիներն իրականացրել են իրենց դավադիր մտադրությունները հայ ժողովրդի հոգևոր առաջնորդների և ժողովրդի նկատմամբ:

▪ Ջրօրհնեքի արարողությունն ուղեկցվել է ժողովրդական սովորույթներով (օրինակ՝ ժողովուրդը գնացել է մերձակա գետերը՝

բժշկության ակնկալիքով): Վերջին հարյուրամյակում Ջրօրհնեքը կատարվում է եկեղեցու ներսում:

▪Ջրօրհնյաց հանդեսի կարևոր նշանակությունը փաստում է այն հանգամանքը, որ դրան մասնակցել են մահմեդական առաջնորդներ, երբեմն նույնիսկ ոչ միայն իբրև հանդիսատես, այլ նաև՝ իբրև ծիսակարգի մասնակից:

▪Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության տոնի ժողովրդական ծիսակարգը XIX դ. վերջի և XX դ. սկզբի տվյալներով հագեցած է եղել՝ մասնակ-ցություն Ճրագալույցի և Ս. Ծննդյան պատարագներին, Ջրօրհնյաց հանդեսին, տոնական սեղանի առկայություն՝ պասուց կերակրատեսակներով, շնորհավորական այցերի կանոնակարգված համակարգ և այլն: Սուրբ Ծննդյան ողջ ծիսահամալիրին մասնակցության հստակ գործառույթներ են ունեցել բոլոր տարիքային խմբերը:

▪Խորհրդային քաղաքական ռեժիմի հաստատմամբ Սուրբ Ծնունդը, այլ տոների թվում, դադարել է գոյատևել ժողովրդի ակտիվ կենցաղում և մասնակիորեն վերականգնվել է միայն վերջին մի քանի տասնամյակներում:

**Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**


1. **Ղուշչյան Գ.**, Քրիստոնեական աշխարհընկալումը հայոց գրական անդաստան-ներում, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2005, 56 էջ:
2. **Ղուշչյան Գ.**, Տաղավար տոները հայոց գրական անդաստաններում, ԵՊՀ հրատ., Երևան, 2007, 163 էջ:
3. **Ղուշչյան Գ.**, Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնը հայոց մեջ, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք, Բ, ԵՊՀ հրատ., 2007, էջ 85-122:
4. **Ղուշչյան Գ.**, Խաչվերաց՝ գերեդարձը Սուրբ Խաչի, Հայ աստվածաբան, Ա, ԵՊՀ հրատ., 2007, էջ 51-73:
5. **Տ. Անուշավան եպս. Ժամկոչյան, Ղուշչյան Գ.**, Մկրտություն, Աստվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք, Բ, ԵՊՀ հրատ., 2007, էջ 7-19:


**ГУЩЯН ГЕВОРГ ГРАЧИКОВИЧ**
**ПРАЗДНИК СВ. РОЖДЕСТВА И БОГОЯВЛЕНИЯ СРЕДИ АРМЯН**
**(ИСТОРИКО-РЕЛИГИОВЕДЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)**

Автореферат
диссертации на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 25.00.01 ''Теория и история религии (религиоведение)''
Защита состоится ...-го февраля 2018 г. в. ... , на заседании специализированного совета ВАК по богословию 068 при Ереванском государственном университете
(Ереван 0025, Абовяна 52, ЕГУ, 6-ой корпус).

Рождество и Богоявление Иисуса Христа является одним из Господских праздников Армянской Апостольской Святой Православной Церкви. В диссертации рассматриваются ветхозаветные пророчества о пришествии Мессии и новозаветное Св. Рождество, апокрифы, повествующие о Рождестве Христа, и апокрифические писания. Анализируется утверждение канона Св. Рождества и Водоосвящения в армянском календаре и его последующее развитие. Освещаются праздник Св. Рождества и Чин Водоосвящения в требниках Армянской Церкви. Из летописных источников взяты упоминания о праздновании Св. Рождества или Водоосвящения. Подробно рассматриваются народные традиции Св. Рождества.

Работа состоит из введения, трех глав, заключения, списков использованной литературы и сокращений.

**Первая глава "Рождество Христа и Богоявление как начало мессианского служения"** посвящена таинству и истории Рождества и Богоявления Мессии в Ветхом и Новом Заветах, а также в Священном Предании и в апокрифических писаниях. В качестве продолжения и развития темы проанализировано отражение таинства Св. Рождества в одном из великих творений средневековой армянской литературы в поэме "Книга скорбных песнопений" и таговой (песнопенной) лирике Нарекаци. Ветхий Завет дает намеки на служения Христа: Рождество и Явление, главная цель, время пришествия, чудотворное Рождение, а также частные случаи – место Рождества, поклонение волхвов, бегство святого семейства в Египет, избиение младенцев, получение прозвища Назаретянин и т. д. Ветхозаветные пророчества, вдохновленные Святым Духом, исполняются в Новом Завете. В этом смысле Ветхий и Новый Заветы взаимно дополняют друг друга, образуя одно совершенное целое.

Для изучения историко-богословского аспекта Рождества Христа чрезвычайно важны апокрифы, не вошедшие в Библию. В них не только повторяются события, записанные в канонических Евангелиях, но также упоминаются значительные и дополнительные сведения об уже известных эпизодах, не включенных в канонический текст. Исключительные подробности относительно Рождества и Богоявления имеются и в Священном Предании, которые отсутствуют в канонических источниках. Таковы, например, предание о явлении Вифлеемской звезды, упоминание о Саломее-повитухе и т. д. Важное значение имеют этнографические и фольклорные сведения об Иоанне Крестителе и праведном Симеоне Богоприимеце, о повивальной бабке, помогающей Марии, об одном из вариантов ее имени (Урумсима), о храме, как месте рождения Христа. Примечательны упоминания исконно армянских мотивов, как, например, образ беременной Марии, прислоненной к хачкару и т. д.

Молитвенник Григора Нарекаци "Книга скорбных пенопений", являясь своеобразным посредником между человеком и Богом, дает богатый материал о таинстве Св. Рождества и Богоявления. Несмотря на то, что нельзя выделить какую-либо отдельную главу, посвященную данному празднику, в нем встречается множество сведений экзегетического и поэтического характера.

**Во второй главе "Утверждение канона Св. Рождества и Водоосвящения в армянском календаре (исторический очерк)"** рассматриваются календарные изменения канонов Св. Рождества и Богоявления и Водоосвящения, начиная с IV в. до последней редакции, осуществленной в 1774 г. Симеоном Ереванци. Вселенская Церковь за начало летоисчисления

приняла дату рождения Иисуса Христа, которую некоторые церкви празднуют 25-го декабря, другие – 6-го января. Существуют разные подходы к этим датам, которые исходят из разных точек отсчета в определении дня Рождества Иисуса. Св. Рождеству, как Господскому празднику, предшествуют постные дни, разговение и предпразднство отмечаются накануне, всенощное бдение совершается накануне ночью, поминание усопших – на следующий день. Св. Рождество и Богоявление продолжается восемь дней. Пост Рождества или Явления Христа является последним постом армянского церковного года. Он начинается 30-го декабря и заканчивается в какой-либо день перед Чрагалуйц (Св. Литургия сочельника). Помимо рождественского пятидневного поста, среди армян был распространен также Пятидесятидневный пост, предшествующий Рождеству.

**Третья глава называется "Упоминания и чины Рождества и Водоосвящения в средневековых источниках".** В ней представлены чины празднования Св. Рождества, встречающиеся в требниках. Рассмотрены также упоминания о празднике Св. Рождества и чине Водоосвящения в армянской письменной летописи. Особенно знаменательны чудесные происшествия того времени. Характерно, что, согласно Агафангелу, в 303 г. на рассвте 6-го января – в день Св. Рождества и Богоявления – Григорий Просветитель в реке Арацани крестил Трдата Великого и весь двор, а в течение семи дней – войско и народ. Это обстоятельство еще раз подтверждает, что в Армении уже было принято проводить данный праздник. Сведения армянских историков и хронографов V-XVIII вв. чаще всего касаются торжества Водоосвящения, свидетельствуя о его важной роли в общественной жизни.

В последнем параграфе третьей главы рассматриваются народные традиции и обычаи, связанные с Рождеством и Богоявлением. Семейно-бытовой опыт армянского народа включает целую систему празднично-обрядовой культуры относительно Рождества и Богоявления. В праздник ключевым является Богослужение. Вокруг церковной службы сформулировалась народная традиция справления праздника в сопровождении особых блюд, песен и игр. Утверждением советского политического режима Св. Рождество, наряду с другими праздниками, ушло из активного народного быта и частично было восстановлено только за последние несколько десятилетий.

**GEVORG HRACHIK GHUSHCHYAN**

**THE FEAST OF NATIVITY OF THE LORD AND TEOPHANY IN ARMENIA**
**(from the historical-religious viewpoint)**

Thesis for degree of candidate of historical sciences, specialty IE. 00.01-" Theory and History of Religion (Religious Studies)

SUMMARY

The feast of Nativity of the Lord and Theophany is one of the dominical feasts of the Armenian Holy Apostolic and Orthodox Churches. The thesis presents prophesies of the Maaseiah's Advent in the Old Testament and the Nativity of the Lord in the New Testament, apocryphal stories referring to the Nativity of the Lord. It analyses the Nativity of the Lord and gives the confirmation of the canon of The Blessing of the Water in the Armenian Directorium and the further developments. The work presents the sacrament of the Nativity and the Blessing of the Water described in the Armenian Book of Feasts. There have been found the commemorations on the Nativity of the Lord or the Blessing of the Water celebrations in the bibliographical sources. A detailed consideration has been given to the public customs of the celebration of the Nativity.

The research consists of the Introduction, three Chapters, Conclusion, The List of Bibliography and Acronyms.

Chapter one, titled as "*The Nativity of Lord and Theophany as the Start of Maaseiaic Government*", is devoted to the sacrament and history of Masaseiah's Birth and Epiphany both in the Old and New

Testaments, as well as in the Holy Legend and apocryphal writings. As the continuation and development of the theme a due analysis has been given to the elicitation of the sacrament of the Nativity of the Lord in the poem of “The Book of Lamentations” by Grigor Narekatzi, which is considered to be the masterpiece of the Armenian bibliography, and other poems by the same author. The Old Testament hints on the Christ’s Governments, such as the Nativity of the Lord and the Theophany, the main Aim and the time of the Coming to the Temple after Forty Days, the Preparations of the Coming, the holy Birth, as well as other particular cases such as The Place of The Birth, the Worship by the Priests, the Escape of the Holy Family to Egypt, the Slaughter of the children, how He was called Nazarene and so on. The things that were prophesied in the Old Testament by the Holy Spirit, found their fulfillment in the New Testament. From this point of view the Old and New Testaments are in harmony with each other and both comprise a complete entity.

Some unique apocryphal stories that are missing from the Bible are of great importance for the investigation of the Birth of Christ from the historic-theological viewpoints. They do not only represent the events that already exist in the canonic Gospels, but also show very interesting additional details referring to the mentioned events that the canonic sources do not contain.

Unique details on the Nativity and Theophany that are absent form the canonic sources can be found in the Holy Legend. They are the legend of the Star shining in the Heaven of Bethlehem, the commemoration of the midwife Salomeh and so on. The commemorations found in the ethnographical and mythological sources are of great importance, such as commemorations about John the Baptist and Simeon the God-receiver (Tseruni), who is the Jesus’ God-Father, about the midwife who helped Mary to give birth and around the name of this woman which is Hooroomsima (one of the versions of her name), about the Temple as the birthplace of Jesus. The particular Armenian motives, such as how Mary is leaning against the Khachkar/Cross stone waiting for the birth and others mentioned in Avetises/good news are of great significance.

The pray-book of “The Book of Lamentations” by Grigor Narekatzi being a specific example of bridge between God and Man provides rich material on the Sacrament of Nativity and Theophany. Though it is difficult to separate a chapter devoted solely to the feast, there are a lot of parts of interpretive and poetic character referring to the matter that are dispersed through the masterpiece.

The second chapter is titled “*The establishment of the canon of the Nativity of the Lord and Theophany in the Armenian Directorium (Historical Review)*” discusses the developments of the Holy Birth, Theophany and Blessing of the Water calendar canons starting from the IV c to the last Directorium that was edited by Simeon Yerevantsi in 1774. The General Church has established the date of the Holy Birth of Christ that according to some Churches is the 25 December and to the others it is 6 January. The different dates of the Holy Birth are due to the fact that the Churches took different starting points in their reckoning.

As Tabernacle feast the following celebrations precede the Nativity of the Lord which are the Fasting, Navagatic/Consecration and Nakhatonak (i.e. before the feast), Guarding/ the Eve of Nativity Merelotz/ Paying visit to the tombs of the dead. The Nativity and the Theophany are celebrated for eight days. The fast of the Nativity of the Lord or the Epiphany is the last fasting of the church year. It starts on 30 December and finishes on any day before Jragalooytz/Lucermarium. Apart from the five-day fast of the Nativity there existed the Hisnagats Pahg/Quinquagesima or Advent in the Armenian Church that preceded the Nativity.

The third chapter has the title of “*The Commemorations and the Feasts of the Nativity and Theophany in the Medieval Sources*” It presents the feasts of the Nativity given in the Book of Rituals. It also presents the commemorations on the Nativity of the Lord and the Theophany given in the Armenian bibliography. The miraculous events happening at that time are especially of great interest. It is interesting to observe that according to Agathangeghos on the day Of the Nativity of the Lord and Theophany, in the morning of 6 January, 303, Grogor Loussavorich/Gregory the Illuminator was baptizing the King Tigran the Great and the Court in the river of Aratsani as well as the solders and the people during the following seven days. The mentiond event shows once more that the Feast had

already been adopted and celebrated in Armenia. The V-XVIII cc works of Armenian historians and contemporaries present the commemorations mainly concerning the feast of Blessing of the Water, emphasizing its significance and role in the social life.

The last subchapter of the third chapter reflects the public customs interwoven with the feast of the Nativity of the Lord and The Theophany. The system of the Church rituals and national customs on the feast of the Nativity of the Lord and Theophany constituted a special part of the social life of the Armenian people. The core of the feast was the Devine Liturgy. The Armenian people have formed their own national customs and traditions together with the Church services that are expressed in celebrations with special dishes, songs and games. The celebration of the Nativity, parallel with other feasts, stopped existing in the peoples' lives with the establishment of the soviet regime, but it started partially to revive only during the last decades.